

կան Գանձնապետությունը մամուլը և այս դեպքում հանդես է գալիս, պահանջելով իրաւունքները և պարտքերը սահմանների ճիշդ որոշումը, բայց ով է լուրը, ով է իրագործողը:

Յաւալի է այս բոլորը, շատ և շատ ցաւալի մեր հոգեւոր պաշտօնական մարմինները չեն ուզում ճանաչել մամուլի քաղաքակրթական նշանակութիւնը, նրա արծարծած ինքնիշխան իրանց հասցէին վերադարձնել համարելով, այդ հաստատութիւնները թշնամութիւն, ատելութիւն են ներկում թէ դէպի մամուլը, թէ դէպի մամուլի ներկայացուցիչները: Չը նայելով որ այդ հիմնարկութիւնների գլուխ անցած անձերից շատերը դեռ երեկ իրանք էլ մամուլի մէջ գործողներից էին, իրանք էլ խիստ բողոքներով ԼԵՅ-նում էին լրագրութեան էջերը, այնու ամենայնիւ, երբ գործի գլուխ անցան՝ իրանք էլ միացան անշարժութեան, բուռնայնի կուսակցներին, նոյնպէս անտես առնելով, նոյն իսկ թշնամաբար վերաբերվելով մամուլի օրինաւոր պահանջներին, արդարացի բողոքներին:

Ի՞նչ անի մամուլը.—ուր, բայց չէ որ ագնիւ, անկաշառ մամուլի ձայնը արդարութեան ձայնն է:

Ա. Ա.

ՎԵՃԱՓԱՌ ԿԱՌՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՈՒԱԽՈՐ ԱՆՆԱՄԱՐՈՒՄԻՆ

Կոյրերի հոգաբարձութեան խորհուրդը ուղարկել է մեզ հետեւալ գրութիւնը տպագրելու համար:

Նորին Սրբութիւն ամենայն հայոց Պատրիարք Կաթողիկոսը, ի պատասխանի Կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնայի կոյրերի հոգաբարձութեան կողմէն եւսնան բաժնի խորհրդի փոխ-նախագահուհի Ծատրիշէվայի նամակին, որով յայտնած էր, թէ դիտաւորութիւն կայ ընտրել նրան բաժնի պատուաւոր անդամ, բարեհաճել է դիմել կամուսնի Ս. Գ. Ծատրիշէվային հետեւեալ նամակով.

«Ձերդ պայծառախալութիւն, որոքմած տիրուհի, Հաճութեամբ ստացայ ձեր պայծառախալութեան նամակը 1893 թվի դեկտեմբերի 10-ից, № 316, որին կցված էին 1891 և 1892 թվերի հաշիւները, որով հաղորդում եմ ինձ Կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնայի կոյրերի խնամակալութեան կողմից եւսնան բաժնի խորհրդի վճիռը, որ կայացել է ձեր նախագահութեամբ դեկտեմբերի 1-ին տեղի ունեցած նիստում:

«Ինձ համար քրիստոնէական պարտաւորութիւն համարելով լինել կոյրերի համար հիմնած բարեգործական խնամատարութեան անդամ, խնդրում եմ ընդունել և յայտնել խորհրդին իմ անկեղծ շնորհակալութիւնս այդ պատուաւոր առաջարկութեան համար:

«Շատ հաճելի եղաւ ինձ իմանալ, որ կոյրերի խնամատարութեան բաժինը ոչ միայն բացել է թիֆլիսում աչքի յատուկ բաժնարան, այլ նաև հիմնել է թիֆլիսում կոյր աղջիկների մի փոքր դպրոց, որ բաց է բոլոր երեխաների համար, առանց խտրութեան ազգութեան և դաստիարակման, աշխատելով այդ կերպով օգնական լինել ոչ միայն մարմնաւոր, այլ և հոգեւոր կարողութեան մէջ:

«Յանկատարով այդ մարդասեր հաստատութեան մէջ որ և է մասնակցութիւն ունենալ, խնդրում եմ ընդունել ինձանից երկու հարիւր ռուբլու տարեկան մի լուծայ, որը խորհուրդը կը ստանայ թիֆլիսի թեմական կոնսիստորիայից: Հոգեպէս օրհնելով խնամակալութիւնը, նրա կողմից եւսնան բաժինը և նրա անդամներին, աղօթում եմ երկնային Բուժիչին զօրացնել խնամակալութիւնը և ձեր խորհուրդը Սուրբ Հոգու չնորոգ և պարզեւ ձեր խնամակալութեան բոլոր սաներին մարմնաւոր և հոգեւոր բժշկութիւն, և մաղթում եմ, որ այդ մարդասիրական հիմնարկութեան մէջ աշխատողների անունները արձանագրվեն ոչ միայն բարեգործական ընկերութիւնների տարեգրութիւններին, այլ և կենաց այն մեծ գրքի մէջ, որ մի օր պէտք է կարդացվի ի լուր երկրի և երկրի:

«Ընդունեցէք, ձերդ պայծառախալութիւն, իմ դէպի ձեզ ունեցած խորին յարգանաց հաւատարմութիւնը: Ձերմեռանդ աղօթեալք՝ Մկրտիչ Պատրիարք Կաթողիկոսը:

ՄԻ ԳԵՆԵՎ ՓԱՍՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Այլ առաջ լուարուք ճանաչանաւոր աստուածաբանների մասին, որոնց վերաբերմամբ առիթ ունեցանք խօսել «Մշակի» № 23-ի մէջ: Դրանցից

առաջինը, Կարապետ սարկաւազը, անցեալ տարի ստանում է տեղապահ Երեմիա Կաթողիկոսից հրաւանձ վերադառնալ և ստանձնել ճեմարանում աստուածաբանութեան դասերը, որպէս զի ձեմարանը աւելորդ ծախս չանի՝ աստուածաբանութեան նոր դասատու հրաւիրելով: Սարկաւազը յայտնում է, որ ինքն թէև աւարտել է իր ուսումը և կատարելագործվել աստուածաբանութեան մէջ, բայց դոկտորութեան աստիճանն ուսուցանելու համար պէտք է դիտարկուի պաշտպանել, որն արդէն պատրաստ է, միայն հարկաւոր է 300 ռուբլի փող տպելու համար: Այդ գումարը անմիջապէս ուղարկվում է տեղապահի կարգադրութեամբ:

Գիտէրտացիան տպվում է,—մի փոքր բրոշիւր, որ կրում է «Պաւղիկեանների աղանդը» վերնագիրը և որի տպագրութիւնը նոյն իսկ մեր Թիֆլիսում շատ շատ կարժենայ 40—50 ռուբլի: Ինչպէս երևում է գրքի վրա եղած մակագրութիւնից, Կարապետ սարկաւազը արժանացել է ստանալ աստուածաբանութեան դոկտորի տիտղոսը դեռ անցեալ տարւոյ սկզբին: Սակայն նա մինչև այժմ էլ չէ վերադառնում և, ինչպէս լսվում է, ճանապարհորդութիւն է կատարում Եւրոպայում, շարունակելով ստանալ ամսական 70 ռուբլի, մինչ լքմիսնում չը գիտեն ո՞ր և ո՞ւր գիմեն աստուածաբանութեան դասատու գտնելու համար:

«Պաւղիկեան աղանդի» հեղինակի բաժնագրերը թուական անմասն չէ միացել և միւս աստուածաբան Չորեքչեանցը: Վերջինս 5 տարի աստուածաբանութիւն սովորելուց յետոյ, յանկարծ մի գեղեցիկ օր գալիս է այն եղբայրացութեան, որ Աստուած օժտել է իրան ոչ-աստուածաբանական ընդունակութիւնով, այլ... գրաւ կը գամ, չէք գուշակի... այլ երաժշտական ձիրքով և թէ մեղք է այդ աստուածային ձիրքը թողել և տաղանդը չը փաղեցնել, քոցո, հարկաւոր է այժմ երաժշտութեամբ պարապել և աստուածաբանութիւնը մի կողմ թողնել:

Շնորհաւորում ենք Քամոյեանց եկեղեցու ծխականներին, քանի որ աստուածաբանութեան փորձը անաշուղ է դուրս եկել, պէտք է նորից 5 տարի նպաստել տաղանդաւոր երաժշտի կատարելագործվելու...

Մենք կարծում ենք, որ Քամոյեանց եկեղեցու երեցիկութիւն և ծխականների վրա անմիջական պարտաւորութիւն կայ դիմել լքմիսնին և խնդրել, որ այլ ևս վերջ դրվի այդպիսի անկարգութիւններին... Ել չենք խօսում այն մասին, որ երկու սարկաւազների այս դեպքը մի պերճախօս փաստ է մի անգամ ընդ միշտ մի դադախար կազմելու ճեմարանի վիճակի մասին, երբ նա կառավարվում էր Նահապետեանի խմբի ձեռքով: Եթէ լսարանական դասընթացը աւարտող, այն ևս ամենաընդունակ և առաջադէմ համարված աշակերտներին աստուածաբանութեան մէջ կատարելագործելու համար պէտք է 5 տարի, կարելի է երևակայել թէ նրանք ինչ պաշար կունենային տարած ճեմարանից: Իսկ այդ խումբը խաւարաւոր մամուլի կողմից միշտ հուշակվել է իրեն ամենաձեռնհասը, ընդունակը և միակ կատարեալը:

Փառք Ալլահին, որ ճեմարանը գոնէ այժմ աստուած է այդ ընդունակներից... Զ. Ա.

ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻՆ ԱՐԵՐՈՐՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Բացուի նախագործների երկու խմբերի փոխադարձ պայմանագիրը արդէն ստորագրված է: Ահա թէ ինչ է նրա էությունը:

«Խմբերից իւրաքանչիւրը իր ներքին գործերի վերաբերեալ բոլոր կարգադրութիւնները անում է բոլորովին անկախ՝ միւս խմբից: Երկրորդ խմբի կարգադրիչները առանձին հաւատարմագրով յանձնարարում են Մանիֆեստին կատարել իրանց գործակալի պարտականութիւնները, կէրօսինի արտահանութեան և նրա վաճառման վերաբերեալ բոլոր գործերը: Երկու խմբերի գործակալները առանձին պայմանագրով սահմանում են իրանց փոխադարձ յարաբերութիւնները և որոշում՝ վաճառման տեղերի սահմանները: Գործակալների մէջ ծագած տարաձայնութիւնները վրձնվում են երկու խմբերի կարգադրիչների ձայների մեծամասնութեամբ: Վաճառքները արտահանմանում կատարվում են բոլոր կէրօսիցներին հաշիւին, այսինքն կէրօսիցներին իրաւաւորելով արտահանման վաճառքներում մաս

ունի՝ համաձայն իր մասնակցութեան չափի: Այն պայմանագրերը, որոնցով ներկայ դաշնակցութեան մասնակցողները մինչև օրս կապալով վերցրած ունեն զանազան շոգենաւեր կէրօսին վաճառանելու համար, ունեն արտասահմանեան վաճառանցիներում կէրօսինի պահեստներ, կամ վաճառած ունեն կէրօսին, բայց դեռ չեն յանձնել,—այդ բոլոր պէտք է կատարվեն ընդհանուրի հաշիւին, սակայն առանց պատասխանատուութեան պայմանագրողների կողմից՝ նախընթաց պարտաւորանքների համար: Խմբերը փոխադարձաբար պատասխանատու են իրանց անդամների և գործակալների կատարած գեղծութիւնների համար: Այն խումբը, որի գործակալը կէրօսին վաճառելիս կը խախտի պայմանագրի օր և է կէտը, պարտական է վճարել միւսին, իւրաքանչիւր խախտման համար, 5000 ռ, տուգանք: Պայմանագրի ժամանակը որոշում են մինչև 1899 թ. ապրիլի 1-ը, սակայն եթէ Նորել ընկերութիւնը կամ Բոտչիկը այդ ժամանակամիջոցին հրաժարվեն առաջին խմբին մասնակցելուց, այդ դեպքում երկրորդ խումբը իրաւունք ունի ներկայ պայմանագիրը քանդելու համարել, առանց դատաստանի և պատասխանատուութեան: 1897 թվից սկսած՝ իւրաքանչիւր խումբը իրաւունք ունի յանձնարել յայտնել, իսկ ապրիլին իրան աղատ համարել այդ պայմանագրի պայմանները կատարելուց, սակայն պատասխանատու լի ներկայ այն պայմանագրերի կատարման համար, որոնք կազմած կը լինեն մինչև խմբի յայտարարութիւնը:

Այդ հիմունքների վրա՝ դաշնակցութեան կէրօսինի վաճառումը կը սկսվի ներկայ թվականի մարտի մէկից:

Ֆ. Մ.

ՆԱՄԱԿ ԱՆԻՔԱՍՆԻՐՈՒՄԻՆ

Փետրվարի 24-ին Այսօր, փետրվարի 24-ին, Աստուածածնի և Կեղեցում կատարեցին Վարդանանց գործակալների տօնը շատ անշուք կերպով: Պատարագին էր կիրելի վարդապետ Սրապեան: Պատարագին ներկայ էին դպրոցի աշակերտները, իսկ աշակերտուհիները ոչ: Օրվայ տօնի յարմար ոչ քաղաքական էր և ոչ մի խօսք: Պատարագիչ վարդապետը, պատարագից յետոյ՝ սկսեց մեկնել աւետարանի միտքը, թէ և այդ գլխի մէջ ոչինչ մտք կամ տաւրակուսական խօսքեր չը կային և շատ օլորդ, հասկանալի էին:

Քարոզիչը ի միջի այլոց յայտնեց, որ մեր դաւառի շինականներից բաղմամբ կարօտ ընտանիքներ գիմեն են լքմիսնին, հոգեւոր բարձր իշխանութեան, օգնութիւն տալիս լինելով: Վեհափառ այդ խնդիրները վերադարձել է Կիրիզ վարդապետին, հրամայելով թէ՛ յայտնել շիրակցի կարօտ շինականներին, որ այստեղ ևս շատ կարօտեալներ կան, չեմ կարող հաց մատակարարել, դու էլ զաւազանդ առ, եկեղեցու մէջ քարոզէ, թող քաղաքի հարուստը պահէ ոչ հարուստ դրացուն, դիւղի ունեցողը՝ շունեցողին և այդպէս կատարեն Աստուծոյ պատուփրանքը: Քարոզիչը յայտնելով այս պատուէրը, հրաւիրեց օգնել անկարող դասին: Քարոզիչի այդ հրաւերը ոչ չէր վրա ազդեցութիւն չունեցան և դժուար թէ նոր օգնութիւն անող լինի: Անողները առանց այդ էլ անում էին:

Ահա շուտով կը հասնի ցանկու ժամանակը, և սերմացուի խնդիրը առաջին տեղն է բռնում: Շատերը յոյս ունեն կառավարութեան օգնութեան վրա, որ սերմացու կը բաժանի: Կարսի նահանգապետը այդ մասին արդէն հոգացել է: Լուսն էնք, որ մեր նոր գաւառապետ գնդապետ Ստօր-չեմակի մտադրի է հոգալ առաջիկայ ցանքների համար շինականներին սերմացու տալու մասին:

Շիրակցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒՄԻՆ

Թիֆլիս, փետրվարի 28-ին Երկուս ու կէս տարի առաջ մի անյայտ ոմն, ուրիշ հնար չը գտնելով գրական շրջան ճարելու առաջարկութիւն արաւ ինձ հետ ընկերանալու: Թէկուզ միայն «Մուրճի» գանձապահի դերով, բայց «հրատարակիչ» տիտղոսով և վիսա—օգուտի մասին յայտնի պայմաններով:

Բայց հազիւ կեղծ-հրատարակիչ գառած՝ նա սկսեց ձգտել խմբագրի կեղծ-օգնականի դեր կատարել ինձ մօտ, ափսոսալով որ չէր յաջողցրել

«Մուրճի» կեղծ-խմբագիրը դառնալու: Այնպէս էր այդ մարդը համոզված, որ միայն թէ փոքր գրպանում լինի՝ նաև կեղծ-տիտղոսներ կրելով իր մի ժամանակ ինձ համար անյայտ, դիտաւորութիւններին կարող էր հասնել:

Սակայն նրա բոլոր դժբաղդութիւնը այն էր, որ գործը ինձ հետ էր բռնել: Նա ինձ չէր ճանաչում, ինչպէս և ես իրան չէի ճանաչում: Եւ ամեն ամիս նա աւելի ու աւելի պէտք է համոզվէր, որ իր յոյսերի մէջ խաբված է: Իսկ նրա յոյսերն էին կեղծելով առաջ գնալ: Գանձապահի դէպս նա հնարաւոր էր կարծում ուկու ոյժով հայկական մամուլի մէջ դիրք ստեղծել: Անփող խմբագրի դէմ նա ամեն ինչ հնարաւոր էր կարծում,—նոյն իսկ նօտարական պայմանից դուրս անկարելի բաներ պահանջել: անաջողութեան դէպքում պայմանը մի կերպ քանդելու սպառնալիքով:

Այս բոլորը որ ես այստեղ ասում եմ՝ թող ընթերցող հասարակութիւնը իմ բողոքական արամաղութեանը չը վերադրէ. այդ բոլորը Փակտօրէն կապացուցի՞ր պ, Վարդապետանցի ինքնագիրը նամակներով, իսկ եթէ հարկաւոր եղաւ—նաև այլ վկայութիւններով:

Այդ տխուր պարտականութիւնը կատարելու ինձ հարկաւոր է այն հանգամանքը, որ պ. Վարդապետանցը իր խաղերը «Մուրճի» հետ դեռ ևս վերջացած չէ համարում. նա անպատճառ ուզում է իր անձը ծանօթացնել հասարակութեանը, ինձ հետ բանաձեւելով արդէն ոչ թէ բերանացի և նամակաւորութեամբ, ինչպէս երկու վերջին տարիներս, այլ լրագրի՝ «Մշակի» էջերում:

Միայն թէ ես անվերջ դիմել «Մշակի» հիւրասիրութեանը չեմ կարող, եւ իմ խոստացածս կը կատարեմ «Մուրճում»։ հետաքրքրողները նրա մէջ կը գտնեն նաև պատասխան բոլոր այն կէտերին, որ այնքան վստահօրէն շօշափել է պ. Վարդապետանցը իր թէ առաջին և թէ երկրորդ նամակներում:

Ա. Արասխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՊՈՒ

Երեքշաբթի, մարտի 1-ին, 1-ին գիմնադիւղի եկեղեցում, Վրաստանի Էկզարքը ամբողջ հոգեւորականութեան հետ հոգեհանգիստ կատարեց ի Տէր հանգուցեալ թագաւոր Կայսր Ալեքսանդր Նիկոլայիչի համար: Հոգեհանգիստին ներկայ էին կառավարապետի օգնական կոմս Տատրիշչիկ, գնահատներ, զինուորական և քաղաքացիական վարչութիւնների պաշտօնականներ, քաղաքային և հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչներ և աղօթողներ:

Պաշտօնապէս յայտարարված է հետեւեալը. «Որովհետեւ թագաւոր Կայսրի գահակալութեան տօնախմբութեան օրը գալիս է մեծ պատի առաջին շաբաթը, այդ պատճառով այդ հանդէսը յետաձգվում է կիրակի, մարտի 6-ին, և ուրեմն այդ օրը Վրաստանի սրբազան էկզարքը Սիօնի տաճարում կը կատարի հանդիսաւոր պատարագ և մաղթանք՝ մաղթելով առողջութիւն Նորին Մեծութեան, 21 թնդանթաձգութեամբ, և նշանակված է եկեղեցական հանդէս Նիկոլայեանին զինուորական տաճարում:

Ստացանք թիֆլիսի վարժուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան 1893 թվի հաշիւը, որից երևում է, որ այդ թվին ընկերութիւնը ունեցել է 189 իսկական, 12 աշխատակից և 14 նպաստող անդամներ: Ընկերութիւնը բացել է Սոլովակում այդ թվին մի պատրաստական դպրոց, որտեղ ուսանում են 19 աղջիկ և 15 տղայ, ընդամենը 34 աշակերտ: Ընկերութեան միջոցով առաջարկվում է անդամներին 112 տեղ՝ վարժուհիների և դատարարականների պաշտօնով: Ընթերցում ասացել են նպատակ 420 ռուբլի, իսկ 21 անձն փոխառութիւն: Ընկերութիւնն ունի 1990 հատոր գիրք և զանազան լրագիրներ: Ընդհանուր մուտքը եղել է 4036 ռուբլի, իսկ ծախսը 2158 ռուբլի: 1893 թվին ձրի անհետակով օգտվել են իսկական անդամներից 11 անձն: Ընկերութեան տարեկան նիստը կատարվեց երեկ, ամիս 2-ին, Գիւրգանտեսական ընկերութեան դահլիճում:

Այս օրերս թիֆլիս են եկել մի կոնցերտ տալու նպատակով հայ երգչուհի Հեղինէ Թոմասեան-Բո-

դէնքերը և նրա ամուսինը՝ գերմանացի պրինսես Նիկոլայ Բոլշևիկովը: Տիկինը աւարտել է Մոսկովայի կոնսերվատորիան և, ինչպէս երևում է մայրաքաղաքի լրագրիչների լէջնդիւններէ, աջող ձայն ունի, իսկ պ. Բոլշևիկովը յայտնի պրինսես է և հանգուցեալ Բոլշևիկովի սիրելին է եղած:

Յօդուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան տա-
ցանք. 1) Գրիգորի, որ. Մարիամ Խաչատու-
նից՝ 6 ռ., հանգանակած մի խումբ անձինքնե-
րից. 2) Բալախանից, Ա. Վաչեանից՝ 2 ռ., Արծ-
րունու դագաղի վրա «Մարիամ» նախաձեռնի ծա-
ռայողների կողմից դրած պատկեր գումարի մնա-
ցորդը: Ուրեմն նախկին 2392 ռուբլի 16 կոպէկի
հետ այժմ ունենք 2400 ռուբլի 16 կոպէկ:

Հաւաքարի ս. Կարապետ եկեղեցու դպրոցի խնա-
մակաւորեան նախագահ Գ. ք. Տէր-Գարեթէկան
խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Նորեւս վախ-
ճանկած կարապետի Արիստակէս Մկչեանը իր
մահից առաջ հետեալ նուիրաբերութիւններն է
արել.—Հաւաքարի ս. Կարապետ եկեղեցու մի-
գուման տղայոց դպրոցին՝ 75 ռ., Թիֆլիսի հայ
հոգեւորականների պաշտօնութեան զանաւարանին՝
50 ռ., Կարսի հայոց երկսեռ դպրոցներին՝ 200
ռ., նոյն քաղաքի Կովկասեան հայոց Բարեգործա-
կան ընկերութեան ճիւղին, ս. Աստուածածին ե-
կեղեցուն և հայ աղքատների զանաւարանին՝ 50-ա-
կան ռուբլի, Կարսի հայ զանաւարանին 30 ռուբլի:
Ս. Կարապետ դպրոցի խնամակալութիւնը յայտ-
նում է իր շնորհակալութիւնը հանգուցեալի ծը-
նողներին՝ դպրոցին արած նուէրի համար:»

Ներկայ մարտի 1-ին լրացաւ հաշտարար դա-
տաւոր Գալիթ Զուրաբեան Կորդուսովի ծա-
ռայութեան 25-ամեակը հաշտարար դատարանի
պաշտօնում: Առաջին տաս տարին նա ծառայել
է Ախալցխայում, Երիւսաղէմում և Զաքարիա-
ւում, իսկ վերջին 15 տարին նա Թիֆլիսի դա-
տաւոր հաշտարար դատարանում է:

Թիֆլիսի Հաւաքար թաղի Դամբորեցոյ եկեղե-
ցու մասին մեր լրագրիչ Ք. 22-ում տպած լուրի մէջ
մի սխալ է մտել: Նախկին երեցփոխ պ. Գրիգոր
Վարաբեցեան յանձնել է նոր երեցփոխին ոչ թէ
700 ռ., այլ 760 ռ. 70 կ., ինչպէս և նշանակ-
ված է հաշիւի մէջ:

Պիատիգորսկից, պ. Գերովը Վասարեանց
«Մշակի» տարեկան մի օրինակ նուիրում է Պիա-
տիգորսկի հայոց ժխական դպրոցին:

ԲԱԳՈՒՅՑ մեզ գրում են. «Փետրվարի 24-ին,
«Վարդանանց» աստիճանի քաղաքացիական էր
հաւաքվել եկեղեցուց Ամենքը ըստ սովորութեան
սպասում էին հանդիսին, որ ամեն տարի տեղի
էր ունենում դպրոցում ժամերգութիւնից յետոյ:
Սակայն հանդէսը տեղի չունեցաւ. շնորհիւ թե-
մական տեսուչ Նիշիչ քահանայ Գեղամանցի,
որը հրահանգներ է ուղղել իր ստորադրեալ ու-
սուցիչներին: Թէ ինչ բնաւորութիւն են կրում
այդ հրահանգները, չը գիտենք, միայն այսքանը
պարզ յայտնի է, որ ուսուցիչների մեծամասնու-
թիւնը այդ բանը գտնում է միանգամայն
անտեղի: Ի դէպ, փետրվարի 23-ին, «Վարդանանց»
աստիճանի հանդիսից երեկոյան, երբ ամեն տարի
այդ ժամանակ դպրոցում ուսուցչական ժողով էր
լինում՝ հետեալ օրվայ հանդիսի համար խորհրդ-
դակցելու, այս տարի նոյն դպրոցում հարսանիք
էր կատարվում: Մարդասիրական ընկերութեան
խորհուրդը՝ 114 հազար ռուբլի կլանող չինու-
թեան դահլիճը տուել էր քրէնով, ինչ էլ կար-
ծում՝ քանիսով, յիսուն ռուբլիով... 1891 թէ 92
թ. ընկերութեան ընդհանուր ժողովում երբ առա-
ջարկվեց, որ դահլիճում բնծ չլինեն և ներկայա-
ցումներին յարմարեցնեն—այն ժամանակ շատերը,
յանձին պ. Պողոս Ղուկասեանցի, պնդում էին,
թէ անմոտեթիւն է այդպիսի դահլիճը ներկայա-
ցումների ծառայեցնել փողի համար: Եթէ ուզում
էք փող վաստակել, յարակցում էր պ. Ղուկա-
սեան, խորհուրդ կը տամ գինեաներ բաց անել,
որովհետեւ այդ աւելի շահաւէտ կը լինի... Մի
ժամանակ ներկայացումն անյարմար էր դատվում
դպրոցական դահլիճում, իսկ այսօր նոյն դահլի-
ճում հարսանիք են անում... Ահա ձեզ լոգիկան:

ՇԱՄԱՆՈՒՅՑ մեզ գրում են. «Միտ երկու տարի
է, որ մեր քաղաքում երկրաշարժի դէպք չէր պա-

տահել. բայց փետրվարի 26-ին, առաւօտեան 9
ժամին, բաւական զգալի երկրաշարժ եղաւ, առ-
կան առանց որ և է միւսս պատճառներ: Երկրա-
շարժը կրկնվեց նոյն օրը երեկոյան, բայց աւելի
թեթեւ կերպով:

ՆՈՒՊՈՒՅՑ մեզ գրում են. «Փետրվարի 24-ին,
«Վարդանանց» աստիճանի քաղաքացիական էր
հաւաքվել եկեղեցուց Ամենքը ըստ սովորութեան
սպասում էին հանդիսին, որ ամեն տարի տեղի
էր ունենում դպրոցում ժամերգութիւնից յետոյ:
Սակայն հանդէսը տեղի չունեցաւ. շնորհիւ թե-
մական տեսուչ Նիշիչ քահանայ Գեղամանցի,
որը հրահանգներ է ուղղել իր ստորադրեալ ու-
սուցիչներին: Թէ ինչ բնաւորութիւն են կրում
այդ հրահանգները, չը գիտենք, միայն այսքանը
պարզ յայտնի է, որ ուսուցիչների մեծամասնու-
թիւնը այդ բանը գտնում է միանգամայն
անտեղի: Ի դէպ, փետրվարի 23-ին, «Վարդանանց»
աստիճանի հանդիսից երեկոյան, երբ ամեն տարի
այդ ժամանակ դպրոցում ուսուցչական ժողով էր
լինում՝ հետեալ օրվայ հանդիսի համար խորհրդ-
դակցելու, այս տարի նոյն դպրոցում հարսանիք
էր կատարվում: Մարդասիրական ընկերութեան
խորհուրդը՝ 114 հազար ռուբլի կլանող չինու-
թեան դահլիճը տուել էր քրէնով, ինչ էլ կար-
ծում՝ քանիսով, յիսուն ռուբլիով... 1891 թէ 92
թ. ընկերութեան ընդհանուր ժողովում երբ առա-
ջարկվեց, որ դահլիճում բնծ չլինեն և ներկայա-
ցումներին յարմարեցնեն—այն ժամանակ շատերը,
յանձին պ. Պողոս Ղուկասեանցի, պնդում էին,
թէ անմոտեթիւն է այդպիսի դահլիճը ներկայա-
ցումների ծառայեցնել փողի համար: Եթէ ուզում
էք փող վաստակել, յարակցում էր պ. Ղուկա-
սեան, խորհուրդ կը տամ գինեաներ բաց անել,
որովհետեւ այդ աւելի շահաւէտ կը լինի... Մի
ժամանակ ներկայացումն անյարմար էր դատվում
դպրոցական դահլիճում, իսկ այսօր նոյն դահլի-
ճում հարսանիք են անում... Ահա ձեզ լոգիկան:

ԲԵՆԻՒՄԻՆՈՒՅՑ մեզ գրում են. «Փետրվարի
24-ին տեղական ուժերից բաղկացած խումբը, յո-
գուտ հայոց ուսումնականի, մի ներկայացում
տուեց ուսումնարանի դահլիճում: Խաղաղին «Մա-
րդի կտակ», «Կրթ-կրթ» և «Երկու քաղաք-
ներ» կատակերգութիւնները, որոնք բաւական
աջող անցան: Այս առաջին ներկայացումն էր
Աղբուղաւում հայերէն լեզուով: Մուտքը եղաւ 20
ռուբլի:

ՍԱՐԿԱՄԻՆՈՒՅՑ, փետրվարի 22-ից, մեզ գրում
են. «Ամսիս 6-ին կայացաւ տեղիս միդասեան
երկսեռ դպրոցի հոգաբարձական ընտրութիւնը.
ընտրվեցին հոգաբարձուհի պ. Զալա Զալա-
լեանցը և օգնական Պետրոսեանցը, իսկ անձ-
նափոխանորդ—պ. Աւետիք Բալաթեանցը: Այս
ընտրութիւնը հանձնել չէ եղել մի քանի անձանց,
որոնց կարծիքով հոգաբարձուս պէտք է լինի
աղան Երից: Այդ պատճառով էլ յիշեալ «ա-
ղաները» զանազան անհեղինակ միջոցներով ուղղում
են բեկանել ընտրութիւնը և նոր ընտրութիւն
նշանակել տալ: Հէնց այդ թշնամութեան պատ-
ճառով էլ մեր աղաները չը մասնակցեցին պա-
րահանգէսին և ներկայացմանը, որ արվեց ամ-
սիս 19-ին, մի խումբ սիրողների մասնակցու-
թեամբ՝ յոգուտ տեղիս ուսումնարանի, և բացի
այն որ չը մասնակցեցին, շատ անձանց էլ
համոզեցին, որ չը գան պարահանդէսին, որ-
պէս զի ուսումնարանը արդիւնքից զրկվի: Սա-
կայն չը նայելով այդ կեղտոտ միջոցներին, պա-
րահանգէսը շատ լաւ անցաւ. և դուռ արդիւնք
մնաց մօտ 80 ռուբլի:

ՇՈՒՄԱՆԻԻ տղայոց երկրասեան ուսումնարա-
նի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպագրել
հետեւեալը. «Հոգաբարձութիւնը պարտք է համա-
րում հրապարակով յայտնելու իր խորին շնորհա-
կալութիւնը թիֆլիսեան պ. Միհրան Բաղդա-
սարեանցին, որը նուիրեց 50 ռուբլի՝ տղայոց
դպրոցի վերին յարկի շինութեան վրա գործադրե-
լու, որը 1887 թից սկսած կիսատ է մնացել:»

ԵԿԱՏԵՐԻՆՈՒՅՑ մեզ գրում են. «Ամսիս
18-ին այստեղից, Սարգիս Խաղաղեանի ձեռնով,
ուղարկվեց Եվրոպայի Վեհաժողովին Կաթողիկոսին
հինգ հարիւր բաւական ռուբլի: Կաթողիկոսին հա-
մար ժողոված գումարը, որը հանգանակել էին մի
քանի անձինք մի ինչպէս՝ գործակալ քահա-
նայի հրահրով:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐԱԿԱՆՈՒՅՑԻ ԿԵԱՆՔԻՑ

Թէ՛հրանում հրատարակվող «Շաւիղ» շաբաթա-
թերթը պարսկաշարի կեանքից հետեւեալ լու-
րերն է հաղորդում.
«Նոր-Ջուղայում, թեմի սրբազան առաջնորդի

սեփական ծախսով մի օրիորդաց դպրոցի նոր
շէնք է կառուցվում:»

«Լուսն են, որ Նոր-Ջուղայում մի ընթերցա-
րան է հիմնվում:»

«Յոռնվարին, Թաւրիզի Լիւաւայի հայոց եկեղե-
ցում կատարվեց Արշակ Նազարեթեանի թաղման
արարողութիւնը: Նազարեթեան մտել էր Սո-
փուլ-Երուզում, թաւաւորվելով իր հակառակորդ
քրիստոնէի, որից շատ մեծ պահանջ ունէր: Պ. Նա-
զարեթեանը վարում էր ուսուցչական փոխ-հրապար-
տութիւն Սփուլ-Երուզում: Թաղմանը ներկայ
էին Թաւրիզի ամբողջ հայ հասարակութիւնը, եւ-
րոպացիներ և հիւպատոսների ներկայացուցիչնե-
րը: Գազաղի վրա դրված էր երկու պատկ:»

«Վարդապետ» (Փայտակարան), նախաձեռնու-
թեամբ Գասպար Սարգսեանի, բացվել է ուսում-
նարան Պարոնը արհեստով դերձակ է, վճարում
է ուսուցչին միայն իր կողմից 20 թուման, իսկ
70 տուն ունեցող Աղաղանը, որի մէջ է դպրոցը,
վճարում է մնացած 20 թումանը: Ուսումնարանը
միակն է Վարդապետ:»

«Լուր կայ, որ իբր թէ եղաւ. Թումանեանները
մտադիր են իրանց ծննդավայր Ողան գիւղում, ո-
րի հողը իրանց սեփականութիւնն է, ուսումնա-
րան բանալ:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Journal des Debats» լրագրի Լօնդոնի թղթ-
թացի խօսքերով, Կաթոստի վերջին ճառը
իրաւանցում գցեց լուրերի ժողովի կուսակցինե-
րի մէջ: Կարծում են, որ այդ ճառի ազդեցու-
թեան տակ խաչակրաց պատերազմի կը սկսվի լու-
րերի ժողովը դէմ: Անգլիական մի այլ լրագիր ա-
սում է, որ զինուորը իջաւ ասպարէզից, բայց մը-
նացին նրա օգնականները: Մեծ ծերունին՝ շատ
անօգուտ հիմնարկութիւններ է ոչնչացրել: Սա-
մոնի վերջին ճիգը կը լինի տապալել լուրերի
ժողովը, և այդ նրան կաշնդլի:

«Լիւնսայից հեռագրում են փետրվարի 21-ին
(մարտի 5) հետեւեալը. «Բուդա-Պէշտում, յոգուտ
եկեղեցական օրինաբանի երկվայ կայացած մի-
տնջին մասնակցում էին 130,000 հոգի ամեն
դասանութիւնը, որոնց թիւում և 60,000 եկւոր-
ներ: Այդ ահալին բազմութիւնը, երաժշտութեամբ,
Անգլաչի, Կարօլի, Ջիլի և այլոց առաջնորդու-
թեամբ, հաւաքվեց Անգլաչի փողոցում և այն
պատշաճութիւններ առջև, ուր գտնվում էին Վէկէրէ և
Շիլլապի, ու համարական ցոյցեր արաւ նրանց: Մի-
տնջը բացեց նախկին մինիստր Օրցկի: Նա առա-
ջարկեց շնորհակալութեան հեռագիր ուղարկել
կայսրին: Պատգամաւորներին մէկը առաջարկեց
մի խնդրագիր ուղարկել թիւսթաւ թախանձելով
ընդունել եկեղեցական օրինաբանը: Տաւը պատ-
գամաւորները ողնորված ճառեր արտասանեցին:
Ոչինչ անկարգութիւններ տեղի չունեցան:»

«Եւրոպական մամուլին այժմ զբաղեցնում է Գը-
լադստոնի հրաժարականը և նրա շարժառիթները:
Այժմեանից կարելի է հաստատապէս ասել, որ Գը-
լադստոնի հրաժարականի պատճառը, բացի նրա
աչքերի տկարութիւնից, նաեւ անգլիական հասարա-
կութեան անտարբերութիւնն էր դէպի նրա գործու-
նէութիւնը: Քաղաքական գործիչը չէ կարող ա-
ռաջ տանել իր նախագիծը առանց հասարակական
կարծիքի օգնութեան և համակրութեան: Երբ լուր-
րերի ժողովը մերժեց համայնքների ժողովի կող-
մից ընդունված իրաւաբանական ինքնավարութեան
օրինաբանը, անգլիական ժողովուրդը շատ սառն
և անտարբեր վերաբերվեց այդ անցքին, և ոչինչ
բողոքներ տեղի չունեցան: Եւ ապա, երբ լուրերի
ժողովը մէկը միտի ետեղի մերժում էր օրինա-
բանը ևս, նոյն հասարակական կարծիքը օգնեց հա-
մակրութիւն չը ցոյց տուեց Գլադստոնի քաղաքա-
կանութեանը: չը պաշտպանեց նրան: Գլադստոն
տեսաւ, թէ անօգուտ է շարունակել կռիւն, և
հաճախաւոր, որ դեռ մեծ ընթերցանի ժամանա-
կը չէ հասել, և թողեց իր պաշտոնը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գլադստոնի յաջորդը, լուր Բոլքերի, 47 տարե-
կան է: Գա մի հարուստ լուր է, ծնված Լօնդո-
նում, բայց չօտանդական բնականից: Նա կուր,
մալի դէպ ունի, կապոյտ, չիտակ աչքերով, որ
կատարական համապատասխանում է առողջ և
ուրախ անգլիացու տիպին: Լուր Բոլքերի 1868
թիւն լուրերի ժողովի անդամ էր: Առաջին քա-
լիւնց արդէն պարլամենտական ասպարիւրում նա
իրան աղաւաղում հռչակեց առաջարկելով կրօնի
դատաւորութիւնը վերացնել Շոտլանդիայի ժողովը:

Գլադստոնի զարթոնում: Գլադստոնի մինիստրու-
թեան մէջ 1881 թիւն նա ներքին գործերի մինիստրի
օգնական էր և ապա հասարակական աշխատանքնե-
րի կոմիսար էր: Երբ որ իրաւաբանական բիլլի պատճա-
ռով տարաձայնութիւն ծագեց նա Գլադստոնին
հաւատարմի մնացող սակաւթիւ լուրերից մէկն
էր: 1886 թիւն Գլադստոն արտաքին գործերի
մինիստրի պաշտօն յանձնեց նրան, բայց այդ մի-
նիստրութիւնը 6 ամիս միայն տևեց: 1892 թիւն
նա կրկին արտաքին գործերի մինիստրի պաշտօն
ստանձնեց Գլադստոնեան մինիստրութեան մէջ:
Լուր Բոլքերի երեքսեան հրահանգութեան
կողմնակից է համարվում:

Կ. Պոլսի լրագրիչները հրատարակել են հետե-
ւեալ տեղեկութիւնը. «Վանի մէջ ոստիկան
Նուրի էֆենդին սպանող ռմբակործ մահի դատա-
պարտուած էր: Կայսերական իրաւունք վաւերա-
ցուած լինելով այս վճիռ, մահապարտ կախուր
է վանի մէջ փետրվարի 1-ին:»

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԿ, 27 փետրվարի: Երէկ, Թագաւոր
Կայսրի ծննդեան օրը, Նոյս Մեծութիւնները
ներկայ էին պատարարին, ապա շնորհաւորու-
թիւններ էին ընդունում, յետոյ Բարձրագոյն ներ-
կայութեամբ տեղի ունեցաւ նախաճաշ, որին
հաւաքված էին զինուորական և քաղաքացիական
բարձր պաշտօնեաները և սվիտանը—Արալի
հետ մեր սակետուրը զարգացնելու համար կազ-
մած յանձնաժողովը միտք ունի հիմնել Բազում
նոյնպիսի տեսակաւոր, որպէս Նիժնի-Նովոգորո-
ւոնն է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԿ, 1 մարտի: Պետական կառուած-
ների մինիստրութիւնը տնայնագործական առաք-
կանների ցուցահանդէսներ է կազմում նորվեգա-
կան Տրոս քաղաքում և Անտվերպէնում: Տարի-
փայլն մասնաժողովը Բազումից կէրտին արա-
հանելու համար Բաթումով՝ որոշեց պակասեցրած
տարիքներ 5 կ. պուրից: Երկրաբանութեան
մինիստրութեան վերակազմութեան նախագիծը
կը ընթիւ պետական խորհրդի ընդհանուր ժողո-
վում մարտի 7-ին:

ՄԱՌԻՒՆ, 1 մարտի: Նոր մինիստրութիւն
կազմվեց Սաքսոնայի գլխաւորութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 1 մարտի: Կայսրուհին իր երեխանե-
րով ճանապարհ ընկաւ դէպի Ապսթա:

ԲՈՒՄԵՆՍԿԵ, 1 մարտի: Բելիստապն ընդունեց
Ռուսաստանի հետ ժամանակաւոր առևտրական
համաձայնութիւն կայացնելու օրինագիրը. դիմա-
դրական կուսակցութեան համարաւ բոլոր ան-
դամները ձայն տուին օրինագրի դէմ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԿ, 1 մարտի: Հրատարակված է
մաքրված չաքարից լրագրիչի՝ ակցիոյ առնելու
մասին 1894 թիւ սեպտեմբերի 1-ից:

ԲԵՐԼԻՆ, 1 մարտի: Պատգամաւորները ժողովը
հաւանութիւն տուեց ուսուցչական տեսակաւոր
րական հրահանգին մնացած մասին:

ԼՕՆԴՈՆ, 1 մարտի: Աղաւաղում կուսակցու-
թեան ժողովը մէջ լուր Բոլքերի յայտարարեց, որ
նոր մինիստրութեան ժամանակ ոչինչ փոփոխու-
թիւն տեղի չի ունենայ քաղաքականութեան մէջ.
փոփոխվեցին միայն անձնաւորութիւնները: Երբ,
Բոլքերի, իրաւաբանական բիլլի անցկացնելու կողմն
է, որի հետ իր կուսակցութիւնը կապված է
պատուի կայսրուր: Նոր պրէմիէրը համալիր է
Գլադստոնին երկու ժողովներ մէջ եղած յարա-
բերութիւնների վերաբերմամբ: Լուրերի ժողովը
իր այժմեան կազմութեամբ անկանոնութիւն է
ներկայացնում, որպէս օրինակի մի ժողով, որին
զեկակարում է պահանջողութեանը աստիճանը:
Կատարելութիւնը իր պարտքն է համարում ո-
չինչ միջոց չը խնայել վերացնելու այդ անընա-
կան դրութիւնը:

№ սերիայի	տոմար	Գումարը	№ սերիայի	տոմար	Գումարը
2,916	49	200,000	1,411	40	
17,623	25	75,000	12,625	1	ն
14,339	33	40,000	15,845	13	
652	33	25,000	10,348	45	
4,981	12	10,000	12,254	24	ա
18,707	43	10,000	12,125	12	
14,065	46	10,000	17,824	44	
12,981	48	8,000-ական	1,549	5	կ
19,583	43		5,518	3	
3,328	37		13,885	45	
13,422	49	8,000-ական	317	25	
4,065	43		18,112	20	ա
55	6		10,446	9	
6,037	18		19,995	23	
2,116	50	8,000-ական	1,734	43	
8,284	28		12,257	19	
10,150	32		1,323	31	
15,260	50		15,308	5	
15,191	30	5,000-ական	14,541	7	1, 0 0 0
15,649	10		18,620	50	

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴԻ ԲՈՐՍԱ

Մարտի 1-ին

Լճործի վրա 10 ֆունտ արծե . . .	93 ր. 60 Կ.
Բերլինի վրա 100 մարկ . . .	45 ր. 72 1/2
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	37 ր. 07 1/2
Ոսկի . . .	7 ր. 51 1/2
Մաքսային կուպոններ . . .	150 ր. 25 1/2
Արծաթ . . .	5 ր. 7 1/2
Բորսային գիտություններ . . .	102 1/8
Պետ. բանկի 5% 1 շրջանի . . .	102 1/8
— — — 2-րդ . . .	102 1/8
— — — 3-րդ . . .	102 1/8
5% 1 շրջանի . . .	160 ր.
4 1/2 1 շրջանի . . .	101 ր.
Արծաթային 5% 1-ին շրջ. . .	101 ր.
— — — 2-րդ . . .	101 ր.
— — — 3-րդ . . .	101 ր.
— — — 4-րդ . . .	101 ր.
Ներքին 5% 1 շրջանի . . .	244 ր.
— — — 2-րդ . . .	221 ր.
Պետական երկաթուղային բնագ. . .	103 1/8
4 1/2 1 շրջանի . . .	94 ր.
4% 1 շրջանի . . .	101 ր.
5% 1 շրջանի . . .	101 ր.
Արծ. կալ. Պետ. բանկի խաղաղություն . . .	192 ր.
4 1/2 1 շրջանի . . .	99 1/8
4 1/2 1 շրջանի . . .	101 1/8
— — — 2-րդ . . .	101 1/8
— — — 3-րդ . . .	101 1/8
— — — 4-րդ . . .	101 1/8
Պետական երկաթուղային կրեդիտ . . .	101 1/8
Մոսկվայի քաղաք. օրվա քաղաքային . . .	101 ր.
Օրվա քաղաքային . . .	100 ր.
Քիմիկատի . . .	98 ր.
Գրառ. թղթ. . .	98 ր.
— — — 2-րդ . . .	98 ր.
— — — 3-րդ . . .	98 ր.
— — — 4-րդ . . .	98 ր.

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԻԼԻՔ-ԱՂԱՍԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ

ՀԻՄՆԱԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆԻ

(Կուլիս, վարձարժեքի արժանի հանդէս)

Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի

կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆ—11—12 Ժ. վերաբու-

ժողովան և վերաբուժան (սրբիւր) հիւանդու-

թիւներին:

Կ. Գ. ԶԻՆՈՎԱՆԻ—9—10 1/2 Ժ. աչքի և նեար-

դային հ.

Դ. Դ. ԲՈՒԴՆԻՎԱՆԻ—10 1/2—11 1/2 Ժ. ներքին,

երեւանների և կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻՉ—11 1/2—12 1/2 Ժ. ականջի,

կողմերի, քթի և կրծքի հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐՈՎԱՆ—12 1/2—1 Ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ներքին և երե-

խայցի հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ա. Գ. ԳՈՐԻՎՈ—6—7 Ժ. Սիֆիլիսի և մէղի ու

սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆ—7—7 1/2 Ժ.

Ի. Ե. ՖԻՐԱՆՅՈՒՆ—7—7 1/2 ականջի, կողմերի

և քթի ու նեարդային հ. երկու-շարժի, չորեքշաբ-

թի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՐԻՎՈ քիմիական և խոշորացուցական

հետազոտութիւններ է անում մէղի, խիւր, ա-

րեան, կաթի և այլն:

Վճար 50 Կ.: Համախոսքի (կոնսիլիումի) և

օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցումը

ընդունվում են և ԳԻՇԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԱՆՆԵՐ:

Հիւանդանոցի վերահսկումը

բժշկական ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆ:

(№ 72)

Վեհափառ Կաթողիկոսի հրամանով լոյս տեսաւ

ժողովրդական ընթերցանութեան համար

„ՉԱՐՉԱՐԱՆՔԻ ՇԱԲԱԹԸ“

80 երեսով և 6 պատկերով: Գինն է 15 կոպէկ:

Գումարով՝ 12 կոպէկ: Հանապարհածախս չը

պէտք է վճարել:

Գրմել Թիֆլիս. Սուրբ Եղիշի Գրատար Կա-

ռարան (№ 24) 2—3

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԻ, ունեւոր-օգնիչներ,

որը Ալեքսանդրովի քաղաքային դպրոց

աւարտած է և լաւ վկայականներ ունի,

զինուորական ծառայութիւնը վերջացնելով,

խնդրում է որ և է պաշտօն շատ չափա-

ւոր պայմաններով: Գրմել Մարտիրոսեանցի

տպարան: Թիֆլիս Մարտիրոսեանցի

(№ 19) 3—5

Վ. Ա. ՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ

ուր մշտապէս ապրում են երկու բժիշկ

ԳԵՂԱՏՈՒՆԸ

արվում է ԱՐԵՆԴՈՎ: Գրմել Երивань,

АКОПЯНЦЬ.

(№ 20)

4—10

Այս տարվայ մարտի 10-ին լոյս կը տեսնի մի

քանի գոյներով նկարված չքեղ հրատարակութիւն

պատկերներ, 17 ան ձեռքի — ՀԱՅ ՊԱՏՐԱՐԻՆԵՐԻ

և ԿԱՌՈՒՂԻՈՍՆԵՐԻ — Հայաստանի նշանաւոր

տեղերի և շինութիւնների հետ միասին:

Ցանկացողները ստանալ պէտք է գրման Կենտ-

րոնական գրաւածառանոցին, թիֆլիս, Գոլովին-

կի պրոսպեկտ, տուն Միրիմանովի:

(№ 24)

2—3

Վ. Ա. ՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ

„ՄՏՔԻՄՇԱԿԸ“

Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ

Գինն է 50 կոպէկ: Գրմել հեղինակին, կամ

Կենտրոնական գրաւածառանոցին, թիֆլի-

սում:

(№ 18) 3—5

Վ. Ա. ՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ

Ռ. ՊԱՏԱՆԵԱՆԻ և ՐԱՖԻԻ

Մ Ե Տ Ո Վ Ի Բ Կ Ե Մ Ե Ն Ե Ր Ը

Կանխիկ վճարով աւանդներին՝

100 հաւան արծե . . . 20 ր.

50 — — — — — 12 ր.

10 — — — — — 3 ր.

1 — — — — — 40 Կ.

Գրմել Թիֆլիս. Սարգիս Կոմանյանցի.

Վ. Ա. ՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ 20 թիֆլիսի պատկերով ջանկարող-

ներն և ուղարկելով հաւան 50 Կ. գրում

են նախ հասցնել:

(№ 18) 3—3

Լ. Բ. ԽԻՂԻՆԻՔԻ ԳՐԱԽԱՆՈՒԹՅՈՒՄ

Ստացվել է վաճառելու համար Արիսո-

շում ՅՈՎՀԱՆՆԻՍԻԱՆՑԻ

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՐԱՆԻ

երկրորդ հատորը: Գինն է 4 ռուբլի:

Նշանակ վաճառվում է բացառապէս և

ուսանող հատորը, որի գինն է 3 ր.

Հանապարհածախսը գնողներին վրա է:

(№ 21)

3—3

Питательный напиток

Чистый Какао-блок

ՍԱՐԳԻՍ ԿՈՄԱՆՅԱՆԿԻ

Ստացվել է վաճառելու համար Արիսոշում ՅՈՎՀԱՆՆԻՍԻԱՆՑԻ

Գինն է 4 ռուբլի:

Նշանակ վաճառվում է բացառապէս և ուսանող հատորը, որի գինն է 3 ր.

Հանապարհածախսը գնողներին վրա է:

(№ 21) 3—3

ԳԱՐԵՋՐԻ ՄԵԾ ՊԱՀԵԱՏ

ԲՈՍՏՈՎ—ԴՕՆԻ ՎՐԱ

„ЮЖНАЯ БАВАРИЯ“—„ՀԱՐԱԽԱՅԻՆ ԲԱՎԱՐԻԱ“

Գ Ա Ր Ե Ջ Ր Ա Յ Ի Ն Շ Ո Գ Ե Շ Ա Ր Ժ Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ի

Գանվում է վոկալի շոստի վրա

Կ Ա Ր Լ Ս Տ Ո Ւ Կ Ե Ն

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ՏԱՆ ՊԱՀԵԱՏՈՒՄ

Արտահանվում է 1/20 վեդրո պարունակող շիշերով . . . 3—

ՊԻԼԻՆԵԱՆ . . . 3—

ՊԵԼԵՅԻ . . . 3—80

Պատուէրներով զիմել վոկալի շոստի փողոցը, կամ վեժիտմանով կայա

փողոցի վրա գտնված գրասենյակը, տուն Չայկովսկու, № 6.

(№ 23) (Կ. Կ.) 3—10